ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

10.02.2020թ. *Քաղաքացիական գործ*
ք. Երևան *թիվ ԱՎԴ2/1629/02/19*

ՈՐՈՇՈՒՄ
Թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործի ընդդատությունը որոշելու մասին

1.Գործի դատավարական նախապատմությունը և ընդդատության հարցի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Հայցվոր) 20.08.2019 թվականին հայցադիմում է ներկայացրել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Մեխակ Գրիգորյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ գումարի բռնագանձման պահանջի մասին:

Հայցադիմումում պատասխանողի հասցեն նշվել է՝ գ. Նոր Խարբերդ, 4-րդ փողոց 120:

29.08.2019 թվականին Դատարանի կողմից (դատավոր՝ Ս. Սահակյան) կայացվել է հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում:

Պատասխանողին հայցադիմումում նշված հասցեով ուղարկված ծանուցագիրը Դատարան է վերադարձվել «սխալ հասցե» նշումով:

Դատարանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից պարզել է, որ պատասխանող Մեխակ Պարույրի Գրիգորյանի հաշվառման հասցեն ք. Երևան, Շենգավիթ, Նոր Խարբերդ 4-րդ փողոց, 120 տունն է:

Նշված հասցեով Պատասխանողին ուղարկված դատական ծանուցագիրը վերադարձվել է Դատարան «չպահանջված» նշումով:

10.01.2020 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

Ներկայացված հայցադիմումում որպես պատասխանողի հաշվառման վայրի հասցե է նշվել գ. Նոր Խարբերդ 4-րդ փողոց, 120 տունը: Նշված հասցեով ուղարկված դատական ծանուցագիրը փոստի կողմից վերադարձվել է «սխալ հասցե» նշումով:

(…)

Դատարանը elections.am կայքից պարզել է, որ պատասխանող Մեխակ Պարույրի Գրիգորյանի հաշվառման հասցեն է՝ ք. Երևան, Շենգավիթ, Նոր Խարբերդ 4-րդ փողոց, 120 տուն:

Ք. Երևան, Շենգավիթ, Նոր Խարբերդ, 4-րդ փողոց, 120 հասցեով պատասխանող Մեխակ Պարույրի Գրիգորյանին ուղարկված դատական ծանուցագիրը վերադարձվել է դատարան «չպահանջված» նշումով:

(…)

Վերոգրյալի հիման վրա նկատի ունենալով, որ հայցադիմումն ընդունվել է ընդդատության կանոնների խախտմամբ, և քանի որ պատասխանող Մեխակ Պարույրի Գրիգորյանի հասցեն գտնվում է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, միաժամանակ հաշվի առնելով, որ պատասխանողը չի ծանուցվել, որպեսզի հնարավորություն ունենա առարկելու տվյալ դատարանում քննելու վերաբերյալ՝ դատարանը գտնում է, որ գործը ենթակա է հանձման Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը»:

17.01.2020 թվականին թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործը ստացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, նույն օրը մակագրվել է դատավոր Դ. Մխեյանին, 22.01.2020 թվականին գործը հանձնվել է դատավորին:

24.01.2020 թվականի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության

օրենսգրքի 12-րդ, 25-րդ, 95-րդ և 121-րդ հոդվածները, գործն ուղարկել է Վճռաբեկ դատարանի նախագահին՝ հետևյալ հիմնավորմամբ.

«(…)

Նշված նորմերից հետևում է, որ հայցադիմումը դատարանին ներկայացվելու պահին փաստաթուղթը, որով որոշվում է պատասխանողի հաշվառման վայրը և դրա հիման վրա նաև դատարանի տարածքային ընդդատությունը, հանդիսանում է հայցադիմումը և դրանում նշված տեղեկատվությունը:

Քննարկվող գործի շրջանակներում հայցադիմումում որպես պատասխանողի հաշվառման վայր նշված է եղել գյուղ Նոր Խարբերդ, 4-րդ փողոց, 120 հասցե, որպիսի պարագայում Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանն իրավաչափորեն եզրահանգել է, որ տարածքային ընդդատությունը պատկանում է Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանին և հայցադիմումն ընդունել է վարույթ:

Սահմանափակվելով միայն փոստային ծանուցումներով, Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանն ինքնուրույն պարզել է, որ պատասխանողի հաշվառման իրական հասցե է հանդիսանում «Ք. Երևան, Շենգավիթ, Նոր Խարբերդ 4-րդ փողոց, 120 տուն» հասցեն, որի արդյունքում՝ ղեկավարվելով Օրենսգրքի 25-րդ հոդվածի 4-րդ մասով, գործը հանձնել է այլ դատարանի քննությանը:

Դատարանը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի կողմից նշված իրավական հիմքի շրջանակներում բացակայել են գործը այլ դատարանի քննությանը հանձնելու համար անհրաժեշտ պայմանները (…)»:

Թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 03.02.2020 թվականին:

2. Կիրառելի իրավական նորմերը, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Արարատի և Վայոց ձորի մարզերի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև գործի տարածքային

ընդդատության շուրջ ծագած վեճը լուծելու և գործի ընդդատությունը որոշելու կապակցությամբ հարկ է վերլուծել քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատության, մեկ դատարանից մեկ այլ դատարան գործերի հանձնման, ինչպես նաև պարզեցված վարույթի կարգով գործերի քննության դեպքում վերը նշված ինստիտուտների կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ հարցերը:

Այսպես.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 21-րդ հոդվածը սահմանում է քաղաքացիական գործերի ընդհանուր տարածքային ընդդատության կանոնները, որի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի, իսկ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում՝ բնակության վերջին հայտնի վայրի առաջին ատյանի դատարան, եթե այլ բան սահմանված չէ սույն օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը տարածքային ընդդատության կանոնների պահպանմամբ իր վարույթ ընդունած գործը պետք է քննի ըստ էության, թեկուզև այն հետագայում դարձել է ընդդատյա այլ դատարանի:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը հանձնվում է այլ դատարանի քննությանը, եթե պատասխանողը մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելն առարկում է գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Օրենսգրքի 296-րդ հոդվածի համաձայն՝ դատարանները պարզեցված վարույթն իրականացնում են սույն օրենսգրքով նախատեսված գործի քննության ընդհանուր կանոնների համաձայն՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են սույն գլխի դրույթներով:

Օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձանց միջնորդությունները, ինչպես նաև նրանց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են

ներկայացվել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Նշված իրավակարգավորումների վերլուծությունից հետևում է, որ Օրենսգրքով սահմանված ընդհանուր կանոնի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան: Ընդ որում, օրենսդիրը սահմանել է նաև, որ քաղաքացու՝ հաշվառման վայր չունենալու դեպքում հայցադիմումը կարող է ներկայացվել պատասխանողի բնակության վերջին հայտնի վայրի դատարան:

Նշված ընդհանուր կանոնից բացառությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հոդվածներով և վերաբերում են այլընտրանքային, պայմանագրային և բացառիկ տարածքային ընդդատությանը:

Հայցադիմումը վարույթ ընդունելիս, ի թիվս այլ հանգամանքների, դատարանը պետք է պարզի արդյոք ներկայացված հայցադիմումում պահպանվել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված տարածքային ընդդատության կանոնները, և միայն այդպիսիք պահպանված լինելու դեպքում որոշում կայացնի հայցադիմումը վարույթ ընդունելու մասին:

Այդուհանդերձ, եթե դատարանը գործը քննելիս պարզում է, որ այն վարույթ է ընդունել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ, ապա այդ գործը պետք է հանձնի ըստ ընդդատության այլ դատարանի: Ընդ որում, նշված դեպքում գործն ընդդատությամբ այլ դատարանի հանձնելու համար բավարար չէ միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ և 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ գործը վարույթ ընդունելու փաստի առկայությունը, այլ անհրաժեշտ է նաև, որ պատասխանողը ներկայացնի իր առարկությունը՝ գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ:

Պատասխանողն իր առարկությունները կարող է ներկայացնել ոչ թե դատավարության ցանկացած փուլում՝ իր հայեցողությամբ, այլ՝ մինչև դատարանի կողմից ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացվելուց հետո պատասխանողն այլևս չի կարող այդ հարցի կապակցության ներկայացնել առարկություններ, իսկ Դատարանը՝ կայացնել որոշում գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին, քանի որ ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործն այլ դատարանի քննությանը հանձնելու վերաբերյալ հարցը լուծվում է, ընդդատության վերաբերյալ առարկությունները ներկայացվում են, իսկ քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկվում է բացառապես մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Քաղաքացիական գործերի տարածքային ընդդատության վերաբերյալ վերը նշված կանոնները հավասարաչափ կիրառելի են նաև գործերի քննության պարզեցված վարույթի նկատմամբ՝ այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 41-րդ գլխի՝ պարզեցված վարույթին վերաբերող կանոններով:

Պարզեցված վարույթում, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի, բացակայում է դատական նիստ հրավիրելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու օրենսդրական պահանջները: Գործին մասնակցող անձինք, այդ թվում՝ պատասխանողները, իրենց միջնորդությունները, ինչպես նաև իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հիմնավորող ապացույցները կարող են դատարան ներկայացնել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Օրենսդիրը, որպես բացասական հետևանք, նախատեսել է, որ նշված ժամկետների խախտմամբ ներկայացված դատավարական փաստաթղթերը և ապացույցները դատարանի որոշմամբ վերադարձվում են դրանք ներկայացնող անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ կարելի է արձանագրել, որ պարզեցված վարույթի շրջանակներում գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ առարկությունը պատասխանողը կարող է դատարան ներկայացնել պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է արձանագրել, որ քաղաքացիական գործի քննությունը պարզեցված վարույթի կարգով իրականացնելու դեպքում գործն այլ դատարանի քննությանը կարող է հանձնվել ներքոշարադրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

1. Քաղաքացիական գործն ի սկզբանե վարույթ է ընդունվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածներով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ,

2. Պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրել է իր առարկությունները,

3. Առարկությունները ներկայացվել են պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

Միայն նշված երեք պայմանների միաժամանկյա առկայությամբ գործն այլ դատարանի քննությանը հանձնված լինելու դեպքում է հնարավոր փաստել, որ գործն ըստ ընդդատության ուղարկած դատարանը չի հանդիսանում այն պատշաճ դատարանը, որը տվյալ գործով պետք է իրականացնի արդարադատություն:

Գործում առկա նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ հայցադիմումում պատասխանողի հասցեն նշվել է գ. Նոր Խարբերդ, 4-րդ փողոց 120:

29.08.2019 թվականին Դատարանի կողմից կայացվել է հայցադիմումը վարույթ ընդունելու և գործը պարզեցված վարույթի կարգով քննելու մասին որոշում:

Հայցադիմումում նշված հասցեով Պատասխանողին ուղարկված ծանուցագիրը Դատարան է վերադարձվել «սխալ հասցե» նշումով:

Դատարանը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից պարզել է, որ պատասխանող Մեխակ Պարույրի Գրիգորյանի հաշվառման հասցեն ք. Երևան, Շենգավիթ, Նոր Խարբերդ 4-րդ փողոց, 120 տունն է:

Նշված հասցեով Պատասխանողին ուղարկված դատական ծանուցագիրը կրկին վերադարձվել է Դատարան՝ այս անգամ «չպահանջված» նշումով:

10.01.2020 թվականին Դատարանը որոշում է կայացրել գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը հանձնելու մասին:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ միայն նշված փաստական հանգամանքի առկայությունն ինքնին բավարար չէ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգում կատարելու համար: Մասնավորապես, սույն գործով Դատարանն իրավաչափորեն կարող էր գալ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու մասին եզրահանգման, եթե գործով բացահայտվեր վերը նշված երեք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Դատարանը որոշում է կայացրել գործը պարզեցված վարույթի կագով քննելու մասին: Տվյալ դեպքում, անհրաժեշտ է, որ Պատասխանողը գործի տարածքային ընդդատության վերաբերյալ ներկայացրած լինի իր առարկությունը պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ Դատարանի որոշումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Մինչդեռ, սույն դեպքում, գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Պատասխանողն անգամ չի ծանուցվել իր դեմ հարուցված քաղաքացիական գործի վերաբերյալ, պարզեցված վարույթ կիրառելու վերաբերյալ Դատարանի որոշումը չի ստացել և զրկված է եղել գործը տվյալ դատարանում քննելու կապակցությամբ առարկություններ ներկայացնելու օրենսդրորեն սահմանված իրական հնարավորությունից:

Հետևաբար, վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները թույլ են տալիս եզրակացնել, որ թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ըստ ընդդատության հանձնելու համար գործում բացակայում են անհրաժեշտ փաստական և իրավական ամբողջական հիմքերը, ուստի, թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական

գործը պետք է հանձնել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները, և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործն ընդդատյա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԱՎԴ2/1629/02/19 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ